

ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2020թ. հունվար-հունիս

pink
ARMENIA

2020թ. 1-ին կիսամյակում հունվարից հունիս ամիսների ընթացքում, արձանագրվել է անձանց նույնասեռական սեռական կողմնորոշման կամ տրանս գենդերային ինքնության նկատմամբ խտրականությամբ զուգորդված իրավախախտումների 27 դեպք: Արձանագրված դեպքերով տուժածները ենթարկվել են ոչ միայն ուղղակի, այլ նաև ասոցացված խտրականության:

Ուղղակի խտրականության դեպքում ՀԳՏՏ (կամ որպես ՀԳՏՏ նույնականացվող) անձանց նկատմամբ դրսևորվում է ավելի վատ վերաբերմունք, քան ցիսգենդեր հետերոսեքսուալ անձի նկատմամբ:

Ասոցացված խտրականության դեպքում վատ վերաբերմունքը պայմանավորված է խտրականության ենթարկվող անձի հետ ասոցացվող անձի (զուգընկերոջ, ընտանիքի անդամի) սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ:

Իրավախախտումների հետևանքով ոտնահարվել են տուժածների պատիվը և արժանապատվությունը, խախտվել են ֆիզիկական անվտանգության և ապահովության, անձնական կյանքի գաղտնիության, հոգեբանական անձեռնմխելիության, աշխատանքային, սեփականության և մի շարք այլ իրավունքներ:

1. Ատելության հիմքով հանցագործություններ

Ատելության հիմքով հանցագործությունը քրեորեն պատժելի արարք է, որի շարժառիթը անձանց որոշակի խմբի, օրինակ՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ կողմնակալությունը կամ նախապաշարմունքներն են: Ընդ որում՝ ոտնձգությունը որպես ատելության հիմքով հանցագործություն որակելու համար էական նշանակություն չունի բռնարարի և տուժածի հարաբերությունների բնույթը, ուստի ընտանիքի անդամների կողմից սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության նկատմամբ բացասական վերաբերմունքով պայմանավորված հանցավոր ոտնձգությունները նույնպես ատելության հիմքով հանցագործություններ են:

Ատելության հիմքով հանցագործությունները մյուս իրավախախտումներից առավել վտանգավոր են և կարող են ավելի ծանր վնաս պատճառել թիրախավորված անձին և այդ հատկանիշն ունեցող անձանց խմբին:

Կազմակերպության կողմից արձանագրվել են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության նկատմամբ ատելությամբ զուգորդված 21 հանցավոր արարքներ: ԼԳԲՏ և նրանց հետ ասոցացվող անձանց ծեծի են ենթարկել, փորձել են ֆիզիկական բռնության ենթարկել, դանակահարել:

2020թ. հունիսին տրանս անձը (տուժածը) գտնվել է այն տարածքում, որտեղ ինքը սեռական ծառայություն է մատուցում: Նրան մոտեցել է մի երիտասարդ տղամարդ և ծաղիկ նվիրել: Տուժածը վերցրել է այդ ծաղիկը՝ մտածելով, որ դա դրական վերաբերմունքի նշան է: Սակայն այդ նվիրողը հարվածել է տուժածին: Տուժածը փորձել է փախչել և նստել իրեն այդտեղ բերած տաքսի մեքենան, որը սպասում էր փողոցի վրա: Նստելով մեքենան՝ նա վարորդին խնդրել է հեռանալ այդտեղից, սակայն վարորդը ձևացրել է, որ չի ճանաչում իրեն, և պահանջել է իջնել մեքենայից: Այդ ընթացքում բռնարարը և նրա հետ ևս 3-4 տղա շարունակել են հարվածել տուժածին, այդ թվում՝ մեքենայի մեջ, քանի որ մեքենան կանգնած է եղել, և լուսամուտը փակված չի եղել: Տուժածը դուրս է եկել մեքենայից որոշ ժամանակ անց և հեռացել այդ վայրից: Տուժածի հասցեին բռնության ընթացքում և հեռանալիս հնչեցրել են սեռական բնույթի հայիոյանքներ: Ծեծի հետևանքով և փախչելու ընթացքում տուժածը կորցրել է պայուսակը, կոշիկները և կեղծամը:

Մեկ այլ դեպքով նույնասեռական տղամարդուն փորձել են դանակահարել ոչ միայն սեռական կողմնորոշման, այլ նաև տրանս ակտիվիստի ամուսին հանդիսանալու համար, այս դեպքում գործ ունենք ասոցացված խտրականության հետ:

Տուժածը զբոսնում էր այգում, երբ մի երիտասարդ տղա խնդրում է նրան մոտենալ և հարցնում՝ արդյոք ինքը այն տրանս ակտիվիստի ամուսինը չէ, ով զինվորական հագուստով տեսանյութեր է տարածում «Տիկ-տոկ» սոցիալական կայքում: Տուժածը պատասխանել է, որ ինքն է, ինչից հետո տղան քաշքշել է տուժածին, հանել դանակը և ասել՝ «հեսա քեզ կտոր-կտոր եմ անելու»: Տուժածը հանել է Էլեկտրահարող սարքը և Էլեկտրահարել բռնարարին:

Կազմակերպությունը ահազանգեր է ստացել նաև կյանքին և առողջությանը սպառնացող իրական վտանգի, սպառնալիքների մասին:

Նույնասեռական տղամարդու հայրը տեղեկացել է նրա սեռական կողմնորոշման մասին: Տղամարդը ժխտել է այդ հանգամանքը, որպեսզի ընտանիքում վիճաբանություն չսկսվի, սակայն նրա հայրը նրա կամքին հակառակ վերցրել է նրա բջջային հեռախոսը և ընթերցել նրա անձնական նամակագրությունը, որտեղ էլ խոսվել է նրա նույնասեռականության մասին: Դրանից հետո տուժածի հայրը հրել և ձեռքով հարվածել է նրան մի քանի անգամ: Տուժածը կարողացել է ազատվել հոր ձեռքերից և փախել այլ սենյակ: Հայրը վերցրել է խոհանոցային դասակը և սպառնացել, որ կսպանի տուժածին, եթե նա շարունակի իր այդ կենսակերպը: Դրանից հետո տուժածը հոր կողմից արհամարհվել է պարբերաբար:

Ֆիզիկական անվտանգության պահպանմանը մեծ կարևորություն տալով՝ կազմակերպությունը նվազ էական չի համարում նաև անձի հոգեկան անձեռնմխելիության և հոգեկան առողջության պահպանումը: Ատելության հիմքով հանցագործություն է հանդիսանում նաև անձին պարբերաբար հոգեբանական բռնության ենթարկելը՝ պատճառելով հոգեկան ուժեղ տառապանք:

Արձանագրված դեպքերից մեկով անչափահաս դիմողի ծնողները կասկածներ են ունեցել նրա նույնասեռականության վերաբերյալ, ինչի պատճառով բարկացել են նրա վրա, ամոթանք տվել, սպառնացել, որ թույլ չեն տա շփվել ընկերների հետ կամ հաճախել դպրոց, կզրկեն կապի միջոցներից, սկսել են նաև վերահսկողություն իրականացնել նրա գործողությունների և շփումների նկատմամբ: Դիմողի խոսքերով՝ այդ մթնոլորտը այնքան ճնշող է եղել, որ ինքն անգամ փորձել է ինքնասպանություն գործել:

Արձանագրվել են սեռական կողմնորոշման վերաբերյալ և այլ անձնական տվյալների բացահայտման և հանրայնացման դեպքեր՝ ֆիզիկական անձանց և պետության կողմից:

Դիմողի նկատմամբ քրեական գործ է հարուցվել զորակոչից խուսափելու համար: Դիմողը վարույթն իրականացնող մարմնին հայտնել է, որ ինքը ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար նույնասեռական լինելու պատճառով: Հետագայում դիմողը տեղեկացել է, որ իր սեռական կողմնորոշման մասին տեղեկատվությունը փոխանցվել է իր գրանցման վայրի քննչական վարչության քննիչին, ով էլ այցելել է իր ընտանիքի բնակարան և այդ մասին հայտնել ընտանիքին՝ որպես ընտանիքի ծանոթ: Այնուհետև հանդիպել է դիմողի եղբոր հետ և նրան նույնպես տեղեկացրել դիմողի՝ նույնասեռական լինելու մասին՝ միաժամանակ ամոթանք տալով և հորդորելով «զսպել» դիմողին:

Ինչպես տեսնում ենք, այս պարագայում անձի մասնավոր կյանքի գաղտնիությունը խախտել է իրավապահ մարմնի աշխատակիցը: Վերջինս այդ տվյալները ձեռք է բերել աշխատանքային պարտականությունների իրականացման շրջանակներում որպես պետական մարմնի աշխատակից: Իր ստանձնած միջազգային պարտավորությունների համաձայն՝ պետությունը պարտավոր է հարգել անձի և քաղաքացու իրավունքները և չխախտել դրանք: Պետական կառույցների աշխատակիցները հանդես են գալիս որպես այս պարտավորության անմիջական կրող: Այնուամենայնիվ, կոնկրետ դեպքով պետությունը թերացել է դիմողի իրավունքները հարգելու գործում և թույլ է տվել անձի մասնավոր կյանքի նկատմամբ միջամտություն:

2. Այլ իրավախախտումներ

Ատելության հիմքով հանցագործություններից բացի արձանագրվել են նաև այլ իրավախախտումներ, որոնք չնայած իրենց վտանգավորության աստիճանով այնքան էլ բարձր չեն, այնուամենայնիվ ոտնահարում են ԼԳԲՏ անձանց հիմնական ազատությունները: 2020թ. հունվարից հունիս ամիսների ընթացքում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ծաղրը և վիրավորանքը շարունակվել են: Կազմակերպությունը չի արձանագրել առօրյայում ԼԳԲՏ անձանց նկատմամբ վիրավորանքի դեպքեր, քանի որ այդպիսի դեպքերը ԼԳԲՏ անձանց կողմից հաճախ ուշադրության չեն արժանանում և չեն դիտվում որպես իրավախախտումներ, բացի այդ ԼԳԲՏ անձինք փորձում են անպատասխան թողնել վիրավորանքները՝ զգուշանալով, որ նման միջադեպերը կարող են վերաճել ծեծկռուտի:

Կազմակերպությունը արձանագրել է սոցիալական ցանցերում և լրատվամիջոցներում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության նկատմամբ ծաղրական վերաբերմունք:

Անհայտ անձը փողոցում տեսանկարահանել է մազերը մազակալով հավաքած տղամարդու՝ առանց վերջինիս համաձայնության, ծաղրել նրան՝ նրան անվանելով կանացի անուններով: Տեսանյութը տեղադրվել է համացանցում՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցում, որտեղ անձին ծաղրել են նաև այլ օգտատերեր:

Արձանագրվել է իրավախախտում աշխատանքային իրավահարաբերությունների ոլորտում:

Նույնասեռական հարաբերությունների մեջ գտնվող կնոջ գործընկերները պատահաբար կարդացել են նրա անձնական նամակագրությունը՝ զուգընկերուհու հետ, ինչից հետո նրան վիրավորել են և ծաղրել: Անձի սեռական կողմնորոշման մասին իմացել է նաև գործատուն, ով գոռգոռացել է նրա վրա և նվաստացրել նրան: Մյուս աշխատակիցները կնոջը հեռացրել են աշխատանքային օնլայն չատերից: Կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված հայտարարված արտակարգ դրության պայմաններում կնոջը աշխատավայրը ժամանակավորապես չի գործել: Այնուհետև նրան հայտնել են, որ ազատված է աշխատանքից: Ըստ դիմողի՝ գործատուն օգտագործել է արտակարգ դրություն հայտարարվելու առիթը իրեն աշխատանքից ազատելու համար, սակայն ազատման իրական պատճառը իր սեռական կողմնորոշումն է եղել:

Աշխատանքային իրավահարաբերությունների դեպքում խիստ դժվար է լինում բացահայտել նույնասեռական անձանց աշխատանքից ազատելու իրական խտրական դրդապատճառը: Դա պայմանավորված է նրանով, որ ՀՀ-ում բավականին տարածված է առանց աշխատանքային պայմանագրի աշխատելը, ուստի գործատուն կարող է խզել աշխատանքային հարաբերությունները առանց որևէ պատճառի, բացի այդ՝ խտրական դրդապատճառը այդպես էլ չի բարձրաձայնվում գործատուի կողմից:

Արձանագրվել է նաև սեփականության իրավունքի խախտում գենդերային ինքնության հիմքով: Հաշվի առնելով հասարակության խտրական վերաբերմունքը իրենց նկատմամբ՝ ԼԳԲՏ անձինք փորձում են բնակարան վարձակալելիս սեփականատիրոջը չտեղեկացնել իրենց ՍԿԳԻ մասին՝ հետագա բարդություններից խուսափելու համար: Սակայն երբեմն

ՍԿԳԻ-ն բացահայտվում է նրանց կամքից անկախ:

Տրանս կինը 1 տարով բնակարան է վարձակալել Երևան քաղաքում: Վարձակալությունից մոտ 2 շաբաթ անց բնակարանի սեփականատերը պահանջել է դուրս գալ բնակարանից նույն ամսվա ավարտին: Դիմողի խոսքերով՝ բնակարանի սեփականատիրոջ նման պահանջը կապված է իր գենդերային ինքնության հետ. դիմողի հարևանները իմացել են դիմողի տրանս լինելու մասին և այդ մասին տեղեկացրել են բնակարանի սեփականատիրոջը, ով էլ չի ցանկացել, որ իր բնակարանում բնակվի տրանս անձ:

3. Ընտանեկան բռնության դեպքեր

ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնություն է գործադրվում ոչ միայն անձանոթների, այլև նրանց ընտանիքի անդամների կողմից: Յուրաքանչյուր տարի կազմակերպության կողմից արձանագրված իրավախախտումների շարքում ընտանեկան բռնության դեպքերը մեծ թիվ են կազմում:

Ընտանեկան բռնություն է համարվում ընտանիքի անդամների կողմից ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական կամ սեռական բնույթի բռնի արարքը:

2020թ. հունվարից հունիս ամիսների ընթացքում արձանագրվել է ընտանեկան բռնության 12 դեպք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի դեպքերի համեմատությամբ ավել է 5-ով: Ընտանիքում բռնության ենթարկված անձանց մի մասը կազմակերպությանն է դիմել ուղղակիորեն ընտանեկան բռնության խնդրով, իսկ դեպքերի մի մասը հայտնաբերվել է կազմակերպության կողմից արտակարգ դրության պատճառով ԼԳԲՏ համայնքին սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանցից 5-ը անչափահաս են:

Նույնասեռական անչափահաս տղամարդու ընտանիքի անդամները՝ մայրը, տատը, տեղեկանալով նրա նույնասեռ հարաբերությունների մասին, գրկել են նրան կապի միջոցներից՝ հեռախոսից, համակարգչից, թույլ չեն տվել տնից միայնակ դուրս գալ, հսկողություն են իրականացրել նրա գործողությունների նկատմամբ: Պահանջել են դադարեցնել նույնասեռ հարաբերությունները, սպառնացել են այլապես դիմել ոստիկանությանը՝ նրա զուգընկերոջ նկատմամբ քրեական հետպնդում իրականացնելու համար՝ անչափահասին ենթադրյալ սեռական բռնության ենթարկելու համար:

Ընտանեկան բռնությունից տուժած անձանցից 4-ը ցիսգենդեր նույնասեռական (հոմոսեքսուալ) կամ երկսեռական (բիսեքսուալ) կանայք են, 7-ը՝ ցիսգենդեր նույնասեռական կամ երկսեռական տղամարդիկ, 1-ը տրանսեքսուալ արական սեռի ներկայացուցիչ:

Լեսբի կնոջ հայրը և մայրը, կասկածելով նրա սեռական կողմնորոշման մասին, սահմանափակել են նրա շփումը ընկերների, մասնավորապես այն աղջիկների հետ, ում

Նույնպես կասկածել են նույնասեռական լինելու մեջ, վերահսկել են դիմողի զանգերը, հանդիպումները, տանից դուրս գալը: Նրանք նաև սպառնացել են, որ նույնասեռական աղջիկների հետ շփումը չդադարեցնելու պարագայում իրենք այդ աղջիկների ընտանիքներին կհայտնեն նրանց սեռական կողմնորոշման մասին: Լեսբի կինը առանց ծնողներին տեղեկացնելու հեռացել է Երևան քաղաք, որտեղ համատեղությամբ բնակարան է վարձակալել իր 2 ընկերուհիների հետ: Ծնողները իրենց դստերը գտնելու համար դիմել են ոստիկանությանը: Ոստիկանության միջոցով կարողացել են գտնել և հանդիպում կազմակերպել իրենց դստեր հետ: Այնուհետև, երբ դուստրը իրեն ուղեկցող տրանս կնոջ հետ փորձել է հեռանալ ոստիկանության բաժնից, նրա ծնողները և այլ բարեկամներ հետապնդել են նրանց տաքսի մեքենան, կանգնեցրել այն և սպառնացել, որ կվճարեն տրանս կնոջը, եթե վերջինս “հանգիստ չթողնի” իրենց աղջկան:

Բռնությունը գործադրվել է այն բանից հետո, երբ ԼԳԲՏ անձանց ընտանիքի անդամները տեղեկացել կամ կասկածել են նրանց ՍԿԳԻ մասին: Իսկ այդ տեղեկատվությունը ընտանիքի անդամներին հայտնի է դարձել տարբեր հանգամանքներում՝ տուժածների անձնական նամակագրությունը ընթերցելուց, սեռական կողմնորոշման հիմքով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելուց, տուժածների ընկերների միջոցով և այլն:

Նույնասեռական տղամարդու մայրը և եղբայրը տեղեկացել են նրա սեռական կողմնորոշման մասին այն բանից հետո, երբ նա նույնասեռական լինելու հիմքով ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար: Դրանից հետո նրա նկատմամբ սկսվել են ճնշումներ, նրան եղբայրը ֆիզիկական բռնության է ենթարկել, նվաստացրել և վիրավորել: Տղամարդը որոշել է հեռանալ և առանձին ապրել, քանի որ ընտանիքի հետ համատեղ ապրել այլևս չի կարողացել, բացի այդ՝ դա պահանջել են նաև ընտանիքի անդամները:

ԼԳԲՏ անձանց ընտանիքի անդամները նրանց ենթարկել են ֆիզիկական բռնության՝ ծեծել են, ապօրինի կերպով զրկել են ազատությունից, ինչը զուգորդվել է հոգեբանական բռնությամբ՝ վիրավորանքներով, հայհոյանքներով և բռնություն գործադրելու սպառնալիքներով:

Դիմողի ծնողները, տեղեկանալով նրա սեռական կողմնորոշման մասին, սկսել են նրան ճնշումների ենթարկել: Նրանք դիմողին տարել են սեքսուոգի մոտ, ով նրանց տեղեկացրել է, որ նույնասեռականությունը հիվանդություն չէ: Վերադառնալու ճանապարհին դիմողի հայրը իջել է մեքենայից և սկսել հարվածել դիմողին, ինչի արդյունքում դիմողի շրթունքը վնասվել է, մարմնի տարբեր մասերին առաջացել են կապտուկներ: Նա կարողացել է մի կերպ դուրս գալ մեքենայի միջից, իսկ երբ հոր բարկությունն անցել է, նրանք վերադարձել են տուն: Հետագայում ևս դիմողի նկատմամբ գործադրվել է հոգեբանական բռնություն, ինչի պատճառով նա որոշել է հեռանալ ընտանիքից և բնակվել առանձին:

Եվս մեկ դեպքով անձին բռնության է ենթարկել իր հետ համատեղ բնակվող քրոջ ամուսինը:

Քրոջ ամուսինը, կասկածներ ունենալով բիսեքսուալ տղամարդու սեռական կողմնորոշման մասին, վիրավորական ակնարկներ է հնչեցրել և ծաղրել տուժածին՝ կապված նրա սեռական կողմնորոշման հետ, իր երեխաներին խորհուրդ է տվել չշփվել տուժածի հետ: 2020թ.-ի հունիսին տուժածի քրոջ ամուսինը ծեծի է ենթարկել տուժածին՝ նրա հասցեին հնչեցնելով սեռական բնույթի հայհոյանքներ կապված վերջինիս սեռական

կողմնորոշման հետ: Տուժածը կարողացել է փախչել իր սենյակը, սակայն բռնարարը այլ դռնով մուտք է գործել այդ սենյակ, փորձել նրան խեղդել, սպառնացել խեղդել նրան ու սպանել:

Հատկանշական է, որ կորոնավիրուսային հիվանդության տարածման և ՀՀ-ում արտակարգ դրության հայտարարման հետևանքով մեծացավ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության ռիսկը:

Արձանագրված դեպքերից մեկով նույնասեռական տղամարդու ընտանիքի անդամները վաղուց էին տեղեկացել նրա սեռական կողմնորոշման մասին: Սակայն քանի որ տուժածը աշխատում էր և ֆինանսապես օգնում ընտանիքին, նրա հետ չէին վիճաբանում: Կորոնավիրուսի կապակցությամբ Հայաստանում հայտարարված արտակարգ դրության պատճառով տուժածը կորցնում է աշխատանքը: Դրա հետևանքով նա այլևս չի կարողանում գումար տրամադրել ընտանիքի անդամներին կամ մասնակցել ընդհանուր ծախսերին: Տուժածի նկատմամբ ճնշումները շատանում են, նրան սկսում են վիրավորել և նվաստացնել՝ շահարկելով սեռական կողմնորոշումը:

Արտակարգ դրության պայմաններում սահմանափակվել է նաև ԼԳԲՏ անձանց տեղաշարժը: Եթե նախկինում ընտանեկան բռնության դեպքում նրանք կարող էին հեռանալ ընտանիքից և բնակվել այլ վայրում, ապա այս շրջանում նման հնարավորությունները նվազել են, քանի որ շփման լայն շրջանակը կարող է մեծացնել նոր հիվանդությամբ վարակման հնարավորությունը:

17-ամյա նույնասեռական երիտասարդի հայրը և եղբայրը նրան ծեծել են այն բանից հետո, երբ իմացել են նրա սեռական կողմնորոշման մասին: Տուժածին ենթարկել են նաև հոգեբանական ճնշումների, վիրավորել և նվաստացրել են՝ կապված սեռական կողմնորոշման հետ: Անձը ցանկացել է հեռանալ ընտանիքից և ապրել առանձին, սակայն կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության պայմաններում չի կարողացել աշխատանք գտնել, որպեսզի ֆինանսապես անկախ լինի ընտանիքից, և ստիպված է եղել շարունակել բնակվել ընտանիքի հետ:

4. Խախտված իրավունքների իրավական պաշտպանությունը և իրավապահ մարմինների վերաբերմունքը տուժածների նկատմամբ

Որքան էլ համատարած լինեն ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնության դեպքերը և այլ իրավախախտումները, ԼԳԲՏ անձինք հակված չեն դիմելու իրավական պաշտպանության մեխանիզմների: Նրանք դա բացատրում են մի քանի հիմնական պատճառներով.

- չեն վստահում իրավապահ մարմիններին, մասնավորապես՝ ոստիկանության աշխատակիցներին, կարծում են՝ իրենց գործերը քննվում են ոչ օբյեկտիվորեն,
- արդյունավետ չեն համարում իրավական պաշտպանության մեխանիզմները,

- կարծում են, որ իրավունքների պաշտպանությունը երկար է տևում և կարող է ձգձգվել տարիներով,
- մտավախություն ունեն, որ իրենց նկատմամբ իրականացված հանցագործության, իրենց ՍԿԳԻ մասին տվյալները կհանրայնացվեն իրավապահ մարմինների կողմից,
- իրենց պաշտպանված չեն զգում հանցավորներից և վախենում են նրանց հաշվեհարդարից:

Լինում են նաև դեպքեր, երբ տուժածները փորձում են ինքնուրույն վերականգնել իրենց խախտված իրավունքները:

2020թ. հունվարից հունիս ամիսների ընթացքում արձանագրված 27 իրավախախտումներից միայն 12 դեպքով ոստիկանությանը գրավոր կամ բանավոր դիմում է ներկայացվել ոտնահարված իրավունքի վերականգնման կապակցությամբ: Որոշ դեպքերում այդ նախաձեռնությունը դրսևորել են ոչ թե տուժածները, այլ ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, տուժողների ընկերները կամ ծանոթները:

Ոստիկանությանը ներկայացված 12 դիմումներից 5-ին ընթացք չի տրվել. ըստ ոստիկանության՝ բացակայել է հանցակազմը, իրավախախտումը քաղաքացիաիրավական բնույթի է եղել: Բոլոր դեպքերում գործով վարույթն իրականացնող մարմինը ձգձգել է գործի ընթացքի մասին դիմողներին տեղեկություններ տրամադրելու գործընթացը կամ ընդհանրապես չի տեղեկացրել կայացված որոշումների մասին: Հաղորդում ներկայացրած անձանցից 3-ը հրաժարվել են պնդել բողոքը բռնարարի հետ հաշտվելու պատճառով: Ներկայումս միայն 1 գործով է իրականացվում նախաքննություն, սակայն այդ դեպքով տուժողի ցանկությամբ վարույթն իրականացնող մարմինը չի տեղեկացվել հանցագործությունը ՍԿԳԻ նկատմամբ ատելության շարժառիթով կատարելու մասին, ուստի այդ հանգամանքը քննության առարկա չի դարձվել: Կազմակերպությունը տեղեկություններ չունի ներկայացված ևս 3 դիմումի ընթացքի վերաբերյալ:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանցից միայն 4-ն է դիմել իրավապահ մարմիններին: Բռնության գործադրած անձանց նկատմամբ կիրառվել է նախազգուշացում կամ անհետաձգելի միջամտության որոշում: Բռնության ենթարկված անձանց մեծ մասը չի դիմել իրավապահ մարմիններին, քանի որ չի ցանկացել ընտանիքի անդամների դեմ բողոք ներկայացնել, նրանց արարքը իրական բռնություն չի համարել կամ չի վստահել իրավապահ մարմիններին՝ կարծելով, որ իրավունքները այդտեղ չեն պաշտպանվի, դեռ ավելին՝ իրավապահ մարմինների աշխատակիցները իրենց նկատմամբ նույնպես բռնություն կգործադրեն կամ կծաղրեն, ինչպես նաև կտարածեն իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին տեղեկատվությունը:

Արձանագրված դեպքերից մեկով նույնասեռական անչափահաս տղայի ծնողները, նրա սեռական կողմնորոշման մասին իմանալուց ի վեր պարբերաբար ստուգել են նրա հեռախոսային նամակագրությունները, հետևել զանգերին, ստիպել չչփվել ընկերների հետ, ովքեր նույնպես հանդիսանում են ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներ: Անձը փախուստի է դիմել տնից և ապաստարան հայցել ընկերներից: Սակայն հետագայում ոստիկանության կողմից վերադարձվել է ընտանիք անչափահաս լինելու և ծնողների խնամքի տակ գտնվելու պատճառով:

Պետք է նշել, որ անչափահասների գործերով քննությունները ունեն իրենց բարդությունները: ՀՀ օրենսդրությամբ նրանք իրավունք չունեն ինքնուրույն լիազորելու փաստաբանին՝ զբաղվելու իրենց իրավունքների պաշտպանությամբ, իսկ նրանց ծնողները չեն ցանկանում, որպեսզի իրենց զավակների պաշտպանությամբ զբաղվեն ԼԳՏՏ անձանց իրավունքները պաշտպանող ՀԿ-ների աշխատակից փաստաբանները: Հետևաբար քրեական գործերի քննության ընթացքում հնարավորություն չի ստեղծվում վարույթն իրականացնող մարմնի՝ քննիչների, հետաքննիչների ուշադրությունը հրավիրել իրավախախտումը ՍԿԳԻ նկատմամբ խտրականությամբ զուգորդված լինելու հանգամանքի վրա: Իրավիճակն ավելի է բարդանում, երբ բռնարարները անչափահասի ծնողներն են, և դեպքերի մեծամասնությամբ անչափահասը վերադարձվում է ընտանիք և շարունակում բնակվել բռնարարի հետ:

Ընտանեկան բռնության արձանագրված դեպքերից մեկով, երբ բռնության ենթարկված անձը դիմել է ոստիկանությանը, ոստիկանության այդ տարածքի բաժնի պետի հետ զրուցելուց հետո հրաժարվել է բողոքից, քանի որ պետը բանավոր կերպով խոստացել է, որ բռնարարը այլևս բռնություն չի գործադրի տուժածի նկատմամբ, և համոզել է չբողոքել:

Անդրադառնալով իրավապահ մարմինների աշխատակիցների վերաբերմունքին՝ կարող ենք նշել, որ որոշ դեպքերում նրանք դրսևորում են չեզոք վերաբերմունք, շատ հազվադեպ՝ աջակցող են բռնության ենթարկված անձի նկատմամբ: Նրանք հաճախ հետաքրքրասիրություն են ցուցաբերում տուժածների սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության և այլ հատկանիշների վերաբերյալ, ինչը խոսում է իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում սեռականության վերաբերյալ ոչ բավարար գիտելիքների մասին: Երբեմն արձանագրվում է նաև ծաղրական և վիրավորական վերաբերմունք ԼԳՏՏ անձանց նկատմամբ:

Կազմակերպությանը դիմած տրանս անձանցից մեկը հայտնել է, որ ոստիկանության աշխատակիցները իրեն ծաղրել են, հարցեր տվել իր գենդերային ինքնությունից, քննադատել արտաքինը՝ ասելով «Էս մանիկյուր ես քսո՞ւմ» և այլն:

Հակիրճ ամփոփում

Սեռական կողմնորոշման և գեղեցիկ ինքնության հիմքով իրավախախտումները արձանագրվում են յուրաքանչյուր տարի, իսկ վերջին տարիներին նկատում ենք դրանց թվաքանակի աճի միտում: Դրանք ընդգրկում են ոչ միայն Երևանը, այլև տեղի են ունենում ՀՀ մի շարք մարզերում: Չնայած այդ խախտումների ծանր հետևանքների՝ տուժողները խուսափում են օգտվել իրենց իրավունքների պաշտպանության իրավական մեխանիզմներից:

Կարծում ենք, որ պետությունը պետք է քայլեր ձեռնարկի միջազգային պայմանագրերով ստանձնած իր պարտավորությունները 3 մակարդակում իրականացնելու համար.

1. հարգի ԼԳԲՏ անձանց իրավունքները և չխախտի դրանք,
2. պաշտպանի ԼԳԲՏ անձանց իրավունքները այլ անձանց խախտումներից,
3. պատշաճ քննություն իրականացնի խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ:

Ահա միայն այս պարտավորությունների ամբողջական կատարման պարագայում կարող ենք հուսալ, որ ՀՀ-ում ԼԳԲՏ անձինք կապրեն ազատ, ապահով և իրավահավասար:

Կայք՝ www.pinkarmenia.org
Հեռ.՝ +374 60 377277
Էլ. հասցե՝ info@pinkarmenia.org

«Փինք» իրավապաշտպան ՀԿ
Երևան, 2020 թ.